

**ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
(հարկիրճ շարադրանք)**

1. ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

ՀՀ գիտության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակներն են գիտության կայուն զարգացման ապահովումը, գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացումը և կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման մեխանիզմների ներդրումը, միջազգայնորեն մրցունակ հիմնարար ուսումնասիրությունների, տնտեսության պահանջներից բխող կիրառական հետազոտությունների, ինչպես նաև երկակի նշանակություն ունեցող գիտելիքների ձեռքբերմանն ուղղված գիտահետազոտական աշխատանքների խթանումը, գիտական կադրերի վերարտադրության արդյունավետ համակարգի ներդրումը, գիտության ենթակառուցվածքների արդիականացումը, կրթություն-գիտություն կապի ամրապնդումը, գիտական արդյունքի առևտրայնացումը, միջազգային գիտական համագործակցության զարգացումը, մտավոր սեփականության արդյունավետ պաշտպանությունը, գիտության ֆինանսավորման բյուջետային և արտաբյուջետային միջոցների ավելացումը:

Այդ նպատակների ձեռքբերմանն ուղղությամբ իրականացվելու են միջոցառումներ, որոնք ամրագրված են ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Գիտություն» բաժնում և ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում:

2026-2028 թվականներին շարունակվելու են՝

➤ Միջազգային գործընկերության աշխարհագրության ընդլայնման, համաշխարհային նշանակության հետազոտությունների իրականացման, ՀՀ-ում միջազգայնորեն մրցունակ, Եվրոպական հետազոտական տարածքի հետ ինտեգրված և այդ հետազոտական տարածքում իր մասնագիտացման տիրույթը (խելացի մասնագիտացում) ունեցող, գիտական գերազանցությունը խթանող ազգային գիտական համակարգ ձևավորելու նպատակով՝

- համաֆինանսավորման սկզբունքով իրականացվելու են Վրաստանի Հանրապետության Շոթա Ռուսթավելու անվան գիտության ազգային հիմնադրամի հետ առաջին անգամ հայտարարված գիտական նախագծերը, ինչպես նաև Հայաստան-Իտալիա և Հայաստան-Գերմանիա համագործակցության ծրագրերը,

- ֆինանսավորվելու են մի շարք միջազգային գիտական կառույցների կամ համագործակցության անդամակցությունները, մասնավորապես.

- Միջուկային Հետազոտությունների Միացյալ Ինստիտուտի (ՄՀՄԻ – JINR), Բարձր Էներգիաների Ստերեոսկոպիկ Համակարգի (ԲԷՍՀ – H.E.S.S.), Գիտության և տեխնոլոգիաների ոլորտում եվրոպական համագործակցության (COST ասոցիացիա), Կյանքի շտրիխ կոդավորման միջազգային կոնսորցիումի (iBOL, մինչև դեպտեմբերի 31, 2025թվական) անդամակցությունը և Քլարիվեյթ Անալիտիքսի և Էլզեվիեռ Ռեաքսիսի գիտատեղեկատվական շտեմարաններին բաժանորդագրությունները, ինչպես նաև առաջիկայում նախատեսվում է բաժանորդագրություն Էլզեվիեռ և Ուայլի գիտատեղեկատվական շտեմարաններին,

- ԵՄ «Հորիզոն Եվրոպա» շրջանակային ծրագրին մասնակցությունը, որի մասնակցության վճարի չափը կախված է ՀՀ մասնակցության արդյունքներից և յուրաքանչյուր տարի այդ գումարը փոփոխվում է՝ կիրառելով համապատասխանեցման գործակից (2021 թվականին մասնակցության վճարը կազմել է 581,424.61 եվրո, 2022 թվականին՝ 493,199.77 եվրո, 2023 թվականին՝ 2,879,658.02 եվրո): 2023 թվականի հունիսին Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության միջև ստորագրվել է դրամաշնորհային պայմանագիր 2,000,000.0 եվրո բյուջեով (2023-2027թթ. ժամանակահատվածի համար), համաձայն որի՝ փոխհատուցվում է ծրագրին մասնակցության համար յուրաքանչյուր տարվա մասնակցության վճարի 50 տոկոսը՝ մինչ օրս փոխհատուցվել է 1,439,829.01 եվրո: Միաժամանակ, ԵՄ «Հորիզոն Եվրոպա» շրջանակային ծրագրի շրջանակներում 2021-2024 թվականներին ՀՀ կողմից ներկայացվել են 157 հայտեր, որոնցից վավեր է ճանաչվել 127-ը, իսկ 2025 թվականի հունվարի դրությամբ կնքվել են 22 դրամաշնորհային պայմանագրեր՝ 8,167,933.81 եվրո ընդհանուր բյուջեով: ՀՀ կողմից իրականացվում են նաև մի շարք տեղեկատվական և խորհրդատվական միջոցառումներ, որոնք միտված են ՀՀ-ում «Հորիզոն Եվրոպա» ծրագիրը խթանելուն.

- շարունակվելու է ֆինանսավորվել «ԻԿՐԱՆԵՏ Կենտրոն» միջազգային կազմակերպությունը,

- բանակցություններ են վարվում Չինաստանի երկրաշարժերի վարչության հետ «Երկրաշարժի մշտադիտարկում և մոդելավորում» (EMS) միջազգային ասոցացված լաբորատորիայի» գործունեության շարունակականության, ինչպես նաև Մոլդովայի հետազոտությունների և մշակումների ազգային գործակալության հետ գիտական նախագծերի աջակցության մրցույթն առաջիկայում կազմակերպելու ուղղությամբ,

- ՀՀ գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիրը (մրցույթն ուղղված է արտերկրի գիտնականների ղեկավարությամբ ՀՀ պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող կազմակերպությունում հեռանկարային, ժամանակակից գիտական ուղղություններով նոր ստորաբաժանումներ ստեղծելուն, մրցույթը ներդրվել է 2022 թվականին և կրում է շարունակական բնույթ),

- հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիրը (թեմաների ղեկավարները արտերկրում բնակվող բարձր վարկանիշ ունեցող գիտնականներ են, որոնք պատրաստ են իրականացնել իրենց հավակնոտ հետազոտական գաղափարները՝ ստեղծելով և ղեկավարելով նոր գիտական ստորաբաժանումներ ՀՀ գիտական կազմակերպություններում, մրցույթը ներդրվել է 2022 թվականին և կրում է շարունակական բնույթ)։

➤ Գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ամրապնդման, գիտության հասարակական վարկի բարձրացմանը նպաստելու, նորավարտ հետազոտողների համար ինքնուրույն աշխատանքի և առավել առաջատար խնդիրների վրա աշխատելու փորձառության ձևավորման, ինչպես նաև գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացման նպատակով՝

- երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) հետազոտությունների աջակցության ծրագիրը,

- ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության անհատական խրախուսման ամենամյա ծրագիրը,

- գիտական լաբորատորիաների կամ բաժինների ամրապնդման ծրագիրը,

- առաջատար հետազոտությունների աջակցության հնգամյա ծրագիրը:

- արտերկրի լավագույն գիտական կենտրոններում գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման միջին և երկարաժամկետ ծրագիրը,

- գիտական կադրերի (PhD, PostDoc) վերապատրաստման ծրագիրը,

- ՀՀ գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc-Armenia 2024» ծրագիրը,

- 2024 թվականին առաջին անգամ իրականացված միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Web of Science» կամ «Scimago Journal & Country Ranking») ներառված առաջատար ամսագրերում գիտական աշխատանքների հրատարակման ծախսերը փոխհատուցելու ծրագիրը,

- «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին» պետական աջակցությունը,

- ADVANCE հետազոտական դրամաշնորհային նախագծերի աջակցությանն ուղղված ծրագիրը:

➤ Հայաստանում առաջատար ոլորտների զարգացման և տարածման, գիտական գործունեության արդյունքների սոցիալ-տնտեսական ազդեցության բարձրացման, երկրի տնտեսության պահանջներից բխող, ինչպես նաև երկակի նշանակության բարձր տեխնոլոգիական մրցունակ արտադրանքի ստեղծմանն ուղղված հետազոտությունների խթանման նպատակով՝

- գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինման ծրագիրը, որն ուղղված է մրցունակ գիտական գործունեության համար ենթակառուցվածքների զարգացմանը,

- փորձարարական մշակումների դրամաշնորհային ծրագիրը, որի գնահատման ժամանակ առաջին անգամ կիրառվել է տեխնոլոգիաների պատրաստության աստիճանի միջազգային սանդղակը (TRL grades),

- 2023 թվականին կազմակերպված «Հեռանկարային ուղղություններով հետազոտական նախագծեր 2024» ծրագիրը, որն ուղղված է գիտական և գիտատեխնիկական գործունեության կարևորագույն և հեռանկարային ուղղություններով (Artificial Intelligence and Data Science (Արհեստական բանականություն և տվյալագիտություն), Quantum technologies (Քվանտային տեխնոլոգիաներ), Robotics (Ռոբոտատեխնիկա), Biotechnology and Human Enhancement

(Կենսատեխնոլոգիա և մարդու լավարկում), Material science (Նյութագիտություն) և Green deal (Կանաչ գործարք)) ինովացիոն բնույթի մրցունակ և բարձր սոցիալ-տնտեսական ազդեցություն ունեցող առաջադեմ գիտահետազոտական նախագծերի իրականացումը,

- երկակի նշանակության հետազոտությունների աջակցության և պետական նպատակային ծրագրերը:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

ՀՀ գիտության ոլորտի զարգացման հիմնական թիրախները շարադրված են ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Գիտության ոլորտին» վերաբերող բաժնով առաջարկվող դրույթներում և ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում:

Այդ թիրախներն են՝

- մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացում.

- գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացում և երիտասարդ կադրերի ներգրավում.

- գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում.

- գիտության ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործում:

Վերոնշյալ նպատակների ձեռքբերման ուղղությամբ 2026-2028 թվականներին իրականացվելու են հետևյալ միջոցառումները՝

- գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինում,

- ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրերի իրականացում,

- հետդոկտորական հետազոտությունների ծրագրերի իրականացում,

- արտերկրի լավագույն գիտական կենտրոններում գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման միջին և երկարաժամկետ ծրագրերի իրականացում,

- գիտական կադրերի պատրաստման բնուսային ծրագրի իրականացում բազային ֆինանսավորման շրջանակներում,
- ինտեգրման կամ հեռավար ղեկավարվող լաբորատորիաների ստեղծում,
- հասարակական, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառների հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրերի իրականացում,
- երկակի նշանակության ծրագրերի իրականացում,
- հեռանկարային ուղղություններով հետազոտական նախագծերի աջակցություն,
- փորձարարական մշակումների նախագծերի աջակցություն,
- գերակա ուղղություններով հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրերի իրականացում,
- հետազոտությունների միջազգային չափանիշների սահմանում և կատարողականի գնահատման մեխանիզմների մշակում և ներդրում,
- աշխարհի առավել զարգացած պետությունների և դրանց գերատեսչությունների կամ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում ինչպես համաշխարհային նշանակության հետազոտությունների, այնպես էլ մի շարք շարժունակության ծրագրերի իրականացում:

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գիտության ոլորտի 2026-2028 թվականների ծախսային գերակայություններն ու դրանց շրջանակներում իրականացվող միջոցառումներն են՝

1. Մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացում (*«Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված «Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 27-րդ կետ»*)՝

Գիտական գործունեության արդյունավետության և մրցունակության բարձրացման կարևորագույն գրավականներից է գիտական ենթակառուցվածքների զարգացվածությունը, որը հնարավորություն է տալիս իրականացնելու մրցունակ գիտական հետազոտություններ ոչ միայն ժամանակակից գիտական սարքավորումների և նյութերի միջոցով, այլև ընձեռնելով գիտական գործունեության համար բարենպաստ ֆիզիկական միջավայր:

Այդ ուղղությամբ նախատեսվում է՝

➤ շարունակել գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինմանն ուղղված մրցութային ծրագրի իրականացումը,

➤ շարունակել եվրոպական շրջանակային ծրագրերի հետ ասոցացման և շրջանակային ծրագրերում Հայաստանի ակտիվ մասնակցության խթանմանը միտված ծրագրերի իրականացումը,

➤ շարունակել համաֆինանսավորման սկզբունքով միջազգային ծրագրերի իրականացումը,

➤ շարունակել անդամակցությունը գիտական կառույցներին/համագործակցություններին, մասնավորապես, ԵՄ «Հորիզոն Եվրոպա» շրջանակային ծրագրին, Միջուկային Հետազոտությունների Միացյալ Ինստիտուտին (ՄՀՄԻ – JINR), Բարձր Էներգիաների Ստերեոսկոպիկ Համակարգին (ԲԷՍՀ – H.E.S.S.), Գիտության և տեխնոլոգիաների ոլորտում եվրոպական համագործակցությանը (COST ասոցիացիա), Կյանքի շտրիխ կողավորման միջազգային կոնսորցիումին (iBOL, մինչև դեպտեմբերի 31, 2025 թվական) և բաժանորդագրություն գիտատեղեկատվական շտեմարաններին՝ Քլարիվեյթ Անալիտիքսին և Էլզեվիեռ Ռեաքսիսին, ինչպես նաև Էլզեվիեռ և Ուայլի գիտատեղեկատվական շտեմարաններին,

➤ ապահովել գիտական և գիտատեխնիկական բնագավառում միջպետական կամ միջգերատեսչական պայմանագրերի և համաձայնագրերի կնքումը:

2. Գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացում և երիտասարդ կադրերի ներգրավում (ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 28-րդ կետը)

ՀՀ գիտության ոլորտի առաջընթաց զարգացման համար սկզբունքային նշանակություն ունի գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման, գիտական և գիտատեխնիկական ոլորտում գիտության հասարակական վարկի բարձրացմանը նպաստելու, ինչպես նաև գիտական կադրերի բարեկեցության ապահովման ու նրանց սոցիալական խնդիրների լուծման հարցը:

Նպատակի ձեռքբերման համար իրականացվող քայլերը պետք է մի կողմից միտված լինեն գիտության ոլորտը երիտասարդ կադրերով համալրելուն, մյուս կողմից՝ միջին սերնդի գիտնականների թվաքանակի բարձրացմանը:

Այդ ուղղությամբ նախատեսվում է՝

- շարունակել ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցությանն ուղղված մրցութային ծրագրի իրականացումը,
- շարունակել հետդոկտորական հետազոտություններին ուղղված մրցութային ծրագրի իրականացումը,
- իրականացնել արտերկրի լավագույն գիտական կենտրոններում գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման միջին և երկարաժամկետ ծրագրերի իրականացումը,
- շարունակել երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) հետազոտությունների աջակցության ծրագրի իրականացումը,
- շարունակել գիտական լաբորատորիաների կամ բաժինների ամրապնդման ծրագրի իրականացումը,
- շարունակել առաջատար հետազոտությունների աջակցության ծրագրի իրականացումը,
- շարունակել կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված եռամյա դրամաշնորհային մրցույթների իրականացումը:

3. Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում (*«Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված «Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 29-րդ կետ»*)՝

Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացումն իրականացվելու է հետազոտությունների միջազգային չափանիշների սահմանմամբ և կատարողականի գնահատման մեխանիզմների ներդրմամբ:

Այդ ուղղությամբ նախատեսվում է՝

- իրականացնել բազային ֆինանսավորման շրջանակներում գիտական կադրերի պատրաստման բոնուսային ծրագրեր,
- շարունակել վերահիմնադրման, ինչպես նաև հեռավար ղեկավարվող լաբորատորիաների ստեղծմանն ուղղված ծրագրերի իրականացումը,

- իրականացնել հասարակական, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառների հետազոտությունների աջակցությանն ուղղված նոր մրցութային ծրագրեր,
- շարունակել երկակի նշանակության հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագիրը,
- փորձարարական մշակումների նախագծերի աջակցությանն ուղղված ծրագիրը:

4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Սույն հավելվածի 2-րդ բաժնում նշված թիրախների ապահովման նպատակով 2026-2028 թվականներին «1162. Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների» ծրագրի համար անհրաժեշտ է հատկացնել համապատասխանաբար՝ **42,622,905.9, 43,711,351.8 և 44,512,215.4 հազ. դրամ**¹:

Ստորև ներկայացվում է սույն ծրագրի միջոցառումների բաշխվածությունը.

1) «11001. Գիտության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծառայություններ» միջոցառումն ուղղված է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի պահպանմանը, որի համար 2026-2028 թվականներին նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ **496,893.3, 511,136.6 և 525,807.2 հազ. դրամ**.

2) «11002. Գիտական ենթակառուցվածքի արդիականացում» միջոցառումն ուղղված է գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների զարգացմանը, ծրագրերի իրականացմանը, գիտական սարքավորումների արդիականացմանը, միջազգային համագործակցության աջակցությանը, որի համար 2026-2028 թվականներին նախատեսվում է հատկացնել **18,504,908.1-ական հազ. դրամ**.

3) «11004. Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն» միջոցառումն ուղղված է «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի, Հայոց-ցեղասպանության թանգարան-ինստիտուտի, Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի պահպանմանը, որի համար 2026-2028 թվականներին նախատեսվում է հատկացնել **962.891.3-ական հազ. դրամ**.

¹ «1162 Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների» ծրագրի համար 2026-2028 թվականներին հատկացվող ընդհանուր ծախսերը՝ ըստ ուղղությունների բերված է Աղյուսակ 1-ում:

4) «11005. Գիտական և գիտատեխնիկական գործունեության գիտական դրամաշնորհային հետազոտություններ» միջոցառումն ուղղված է գիտնականների և հետազոտական խմբերի նախաձեռնությամբ ներկայացված ու մրցութային կարգով ընտրված հետազոտական նախագծերի իրականացմանը, որի համար 2026-2028 թվականներին նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ **10,017,956.4, 10,942,159.0 և 11,578,352.0 հազ. դրամ.**

5) «11006. Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ» միջոցառումն ուղղված է մրցութային հիմունքներով ընտրված գիտության ու տեխնիկայի առաջնային ուղղություններին համապատասխանող գիտատեխնիկական պետական ծրագրերի իրականացմանը, որի համար 2026-2028 թվականներին նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ **455,766.0, 605,766.0 և 755,766.0 հազ. դրամ.**

6) «11007. Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակում» միջոցառումն ուղղված է գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակմանը, որի համար 2026-2028 թվականներին նախատեսվում է հատկացնել **95,556.3-ական հազ. դրամ.**

7) «11008. Բարձր էներգիաների ֆիզիկայի բնագավառի ենթակառուցվածքների արդիականացում» միջոցառումն ուղղված է «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանմանը և գիտական ներուժի արդիականացմանը, ֆիզիկայի բնագավառում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացմանը, որի համար 2026-2028 թվականներին նախատեսվում է հատկացնել **1,115,757.3 -ական հազ. դրամ.**

8) «11009. Արագացուցչային տեխնոլոգիաների զարգացում» միջոցառումն ուղղված է «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտի հիմնադրամի պահպանմանը և արագացուցչային փորձարարական լաբորատորիաների զարգացմանը, արագացուցչային ֆիզիկայի և տեխնիկայի բնագավառում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացմանը, որի համար 2026-2028 թվականներին նախատեսվում է հատկացնել **262,520.2-ական հազ. դրամ.**

9) «11010. Էտալոնների պահպանում և զարգացում» միջոցառումն ուղղված է ՀՀ ազգային էտալոնների պահպանմանն ու զարգացմանը, որի համար 2026-2028 թվականներին նախատեսվում է հատկացնել **45,000.0-ական հազ. դրամ**։

10) «11012. Գիտական գրադարանային ծառայություններ (գիտության ոլորտ)» միջոցառումն ուղղված է գրադարանային հավաքածուների պահպանմանը և համալրմանը, ընթերցողների սպասարկմանը, գրադարանային միջոցառումների կազմակերպմանը, որի համար 2026-2028 թվականներին նախատեսվում է հատկացնել **150,630.1-ական հազ. դրամ**։

11) «11019. Գիտական աստիճանաշնորհման և գիտամանկավարժական կոչումների շնորհում» միջոցառումն ուղղված է ՀՀ-ում գիտական որակավորման, գիտական աստիճանի և գիտական կոչման վկայագրերի հանձնմանը, միջազգային կապերի զարգացմանը, ատենախոսությունների թվայնացմանը և գիտնականների շտեմարանների ստեղծմանն ու շահագործման գործընթացների իրականացմանը, որի համար 2026-2028 թվականներին նախատեսվում է հատկացնել **52,826.9-ական հազ. դրամ**։

12) «12001. Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ» միջոցառումն ուղղված է պետական գիտական ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողներին հավելավճարների տրամադրմանը, որի համար 2026-2028 թվականներին նախատեսվում է հատկացնել **450,000.0-ական հազ. դրամ**։

13) «12002. ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվո վճարներ» միջոցառումն ուղղված է ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվո վճարների տրամադրմանը, որի համար 2026-2028 թվականներին նախատեսվում է հատկացնել **112,200.0-ական հազ. դրամ**։

14) «32004. Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինում» միջոցառումն ուղղված է ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվո վճարների տրամադրմանը, որի համար 2026-2028 թվականներին նախատեսվում է հատկացնել **9,900,000.0-ական հազ. դրամ**։

Աղյուսակ 1. «1162. Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների» ծրագրի համար 2025-2028 թվականներին հատկացվող ընդհանուր ծախսերը՝ ըստ ուղղությունների:

Ծրագրի/ Միջոցառման դասիչ	Ծրագրի/Միջոցառման անվանում	2025 թ. հազ. դրամ	փոփոխություն ը %-ով	2026 թ. հազ. դրամ	փոփոխությունը %-ով	2027 թ. հազ. դրամ	փոփոխություն ը %-ով	2028 թ. հազ. դրամ
1162	Գիտական և գիտատեխնիկական հետազոտության ծրագիր	33,912,203.5	25.7	42,622,905.9	2.6	43,711,351.8	1.8	44,512,215.4
11001	Բարձրագույն կրթության և գիտության բնագավառների պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծառայություններ	449,939.7	10.44	496,893.3	2.87	511,136.6	2.87	525,807.2
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	1.33		1.17		1.17		1.18
11002	Գիտական ենթակառուցվածքի արդիականացում	14,158,889.7	30.69	18,504,908.1	-	18,504,908.1	-	18,504,908.1
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	41.75		43.42		42.33		41.57
11004	Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն	962,891.3	-	962,891.3	-	962,891.3	-	962,891.3
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	2.84		2.26		2.20		2.16
11005	Գիտական և գիտատեխնիկական գործունեության գիտական դրամաշնորհային հետազոտություններ	9,142,839.0	9.57	10,017,956.4	9.23	10,942,159.0	5.81	11,578,352.0
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	26.96		23.50		25.03		26.01
11006	Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ	305,766.0	49.06	455,766.0	32.91	605,766.0	24.76	755,766.0

	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	0.90		1.07		1.39		1.70
11007	Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակում	95,556.3	-	95,556.3	-	95,556.3	-	95,556.3
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	0.28		0.22		0.22		0.21
11008	Բարձր էներգիաների ֆիզիկայի բնագավառի ենթակառուցվածքների արդիականացում	1,031,865.3	8.13	1,115,757.3	-	1,115,757.3	-	1,115,757.3
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	3.04		2.62		2.55		2.51
11009	Արագացուցչային տեխնոլոգիաների զարգացում	257,961.2	1.77	262,520.2	-	262,520.2	-	262,520.2
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	0.76		0.62		0.60		0.59
11010	Էտայլոնների պահպանում և զարգացում	45,000.0	-	45,000.0	-	45,000.0	-	45,000.0
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	0.13		0.11		0.10		0.10
11012	Գիտական գրադարանային ծառայություններ (գիտության ոլորտ)	150,630.1	-	150,630.1	-	150,630.1	-	150,630.1
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	0.44		0.35		0.34		0.34
11019	Գիտական աստիճանաշնորհման և գիտամանկավարժական կոչումների շնորհում	52,826.9	-	52,826.9	-	52,826.9	-	52,826.9
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	0.16		0.12		0.12		0.12

12001	Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ	450,000.0	-	450,000.0	-	450,000.0	-	450,000.0
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	1.33		1.06		1.03		1.01
12002	ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվովճարների	112,200.0	-	112,200.0	-	112,200.0	-	112,200.0
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	0.33		0.26		0.26		0.25
32004	Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինում	5,518,838.0	79.39	9,900,000.0	-	9,900,000.0	-	9,900,000.0
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	16.27		23.23		22.65		22.24
32005	Արհեստական բանականության գիտահետազոտական կենտրոնի արդիականացում	1,177,000.0	(100.00)	-	-	-	-	-
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	3.47		-		-		-